

Բ.

ԹԻԻԹԻԻՆՃԻԻ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ի՞նչ էր շարժառիթը իր ուղեւորութեան դէպի Հապէշիստան: Ասիկա հարց մըն է, որուն պատասխանը տալ բաւական դժուար է: Յովհաննէս Թիւթիւնճի իր ուղեւորութեան մէջ բառ մը իսկ չունի այս մասին: Բնաւ չ'ըսեր, թէ ինչո՞ւ յանձնուած է իրեն այս առաքանելի ուղեւորութիւնը դէպի խաւարակոռն Ափրիկէ: Բայց անշուշտ ունէր լուրջ շարժառիթ մը:

Առաջին ենթադրութիւնը, որ մեր մտքին կը ներկայանայ, կրօնական առաքելութեան մը գաղափարն է, որ սակայն քիչ հաւանականութիւն կը ներկայացնէ:

Յովհաննէս Թիւթիւնճի եթէ այդ գաղափարով Հապէշիստան գացած ըլլար, պատճառ մը չունէր ծածկելու զայն. մինչ այս մասին ոչինչ գրած է: Յետոյ իր կրօնական առաքելութիւնը ի՞նչ կրնար ըլլալ: Քարոզչութիւն կամ հաւատածաւալ գործունէութիւն՝ Հապէշները հայադաւան դարձնելու համար. ո՛չ անշուշտ, քանի որ արդէն Հապէշները մեզի դաւանակից էին և վաղեմի ժամանակներէ սկսեալ հայ և հապէշ եկեղեցիները կրօնակցական յարաբերութիւններ ունեցած էին: Այս իրողութիւնը շատ որոշ է և հաստատուած օտար ուսումնասիրողներէ իսկ: Այսպէս՝ Բեթրսպուրկի (այսօր Լենինկրատ) համալսարանի բրոֆէսէօրներէն Տուրայեւ, որ եթովպական գրականութեան մէջ հեղինակութիւն է, 1912ին հրա-